ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էդգար Կարապետյան
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ

Վերջին տասնամյակի տնտեսական և քաղաքական փոփոխությունները առաջացրել են իրավական կարգավորման ոլորտի կատարելագործման անհրաժեշտություն: Մասնավորապես կազմակերպությունների քրեական պատասխանատվության համակարգի ներդրումը պահանջում է քրեական օրենսդրության էական կատարելագործում, ուստի անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել նման նորամուծությունների վերաբերյալ, այսպես ասած, «կողմ» կամ «դեմ» կարծիքները:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համակարգի քրեական օրենսդրությունում ներմուծելու անհրաժեշտությունը պայմանավորված է շատ երկրների օրենդրություններում այդ համակարգի առկայությամբ: 19-րդ դարում իրավաբանական անձի պատասխանատվությունը լուծվում էր բացառապես քաղաքացիաիրավական նորմերով: Տնտեսության բուռն զարգացումը, բաժնետիրական ընկերությունների, արտադրական կառույցների առաջացումը երընտրանքի առջև կանգնեցրին մասնագետներին. անձը խախտում է ոչ թե քաղաքացիաիրավական պարտավորությունը, այլ հասարակական հարաբերության հանրային (օրինակ՝ ֆրանսիական շուկայի կարգավորման) ոլորտը, կարո՞ղ է արդյոք վերջինս ենթարկվել քրեական պատասխանատվության:

20-րդ դարի առաջին կեսին տնտեսական կյանքի տեխնոլոգիականացումը անհրաժեշտություն առաջացրեց այդ ոլորտ ներմուծել տարատեսակ սանկցիաներ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին իրավագետներին հետևյալ հարց էր հետաքրքրում. պետական հարկադրանքը կարո՞ղ է կիրառվել ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձանց նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը կարո՞ղ է ենթարկվել ոչ միայն քաղաքացիաիրավական, այլ նաև քրեական պատասխանատվության:

Արտասահմանյան երկրներում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը տեղ է գտել մի շարք մասնագետների աշխատություններում[1]: Ինչ վերաբերվում է քննարկվող հարցի հայրենական տեսակետին, ապա

[1] Տե՛ս **Антонова Е.Ю.** Уголовная ответственность юридических лиц: Монография / Под ред. проф. А. И. Коробеева. – Владивосток, 2005. С. 164., **Бирюков П.Н.** Уголовная ответственность юридических лиц за экономические преступления (опыт иностранных государств). М.: Юридлитинформ, 2008. – 145 с., **Никифоров А.С.** Юридическое лицо как субъект преступления и уголовной ответственности. М.: АО «Центр Юринфор», 2002. — 204 с., **Грищук В. К.** К вопросу об уголовной ответственности юридических лиц // Актуальные проблемы уголовного и уголовно-процессуального законодательства и

պետք է փաստել, որ դրա ուսումնասիրությանը շատ քիչ ուշադրություն է դարձված: Իրավաբանական անձանց՝ որպես հանցագործության սուբյեկտի հասկացությունը ՀՀ քրեական օրենսդրության մեջ դեռևս չենք հանդիպում, սակայն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնահարցը մնում է վիճահարույց մեր քրեական իրավունքում: Այն չի կորցրել իր արդիականությունը նաև նոր քրեական օրենսգրքի ընդունումից հետո. դրա 23-րդ հոդվածում մասնավորապես սահմանվում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է միայն ֆիզիկական անձը, որը հասել է օրենքով սահմանված տարիքի:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ հայկական քրեական իրավունքի կարևոր ինստիտուտները՝ քրեական պատասխանատվություն, պատիժ, հանցակցություն, անհրաժեշտ պաշտպանություն, ծայրահեղ անհրաժեշտություն և այլ, ավանդականորեն ձևավորվել են և զարգացել այն հիմնադրույթի վրա, որ հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն մեղսունակ ֆիզիկական անձը: Բացի դրանից, հասկացությունները, որոնց վրա հիմնվում է քրեական օրենսդրությունը (հանցագործություն, մեղսունակություն և անմեղսունակություն, մեղք, հանցանքի նախապատրաստություն, հանցափորձ և այլն), գործնականում կիրառելի չեն իրավաբանական անձանց նկատմամբ: Բացի դրանից ՀՀ քրեական օրենսդրությունը սահմանում է, որ քրեական օրենքը տարածվում է ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ, այն է՝ ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք կատարել են հանցանք:

Այնուամենայնիվ, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության դրույթի ներմուծումը ՀՀ քրեական օրենսդրություն կնպաստի, որ այնտեղ կատարվեն արմատական բարեփոխումներ՝ հատկապես հանցագործություն հասկացության և պատասխանատվության մասով:

Հիմնավորումների և առաջարկությունների համար անհրաժեշտ է քննարկվող հարցի առավել խոր և առավել մանրակրկիտ ուսումնասիրություն: Այդ առումով անհրաժեշտ է ուսումնասիրել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը մեկնաբանող արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում առկա նորմերը:

Օրենսդիրները կորպորատիվ պատասխանատվության մասին սկսեցին խոսել միայն այն ժամանակ, երբ տնտեսությունում գլխավոր դերը խաղացին ոչ թե անհատ, այլ կոլեկտիվ սուբյեկտները: Տնտեսությունն այդ կարգավիճակին հասավ կապիտալիզմի պայմաններում: Հենց այդ ժամանակաշրջանում առավել նկատելի դարձավ կոլեկտիվ միավորումների գործունեության քաղաքացիաիրավական և վարչական օրենսդրությունների նորմերով իրավական կարգավորման անբավարարությունը:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության արգելքը ծագել է դեռևս բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանում, երբ քրեական պատասխանատվության հիմքում դրվեցին նոր սկզբունքներ (պատասխանատվություն մեղքի առկայության պարագայում և անհատական պատասխանատվութ-

---

практики его применения: 2003 г., Киев: Институт регионального управления и права, 2003., **Дудоров О.** Проблема юридичної особи як суб'єкта злочину та її вирішення у проектах Кримінального кодексу України І О. Дудоров. ІІ Вісник Академії правових наук України. - 1999. - № 2. (на украинском языке): Волженкин Б.В. Уголовная ответственность юридических лиц / Б.В. Волженкин // Санкт-Петербургский юрид. ин-т Генеральной прокуратуры РФ. - СПб., 1998. - 40 с.:

յուն): Սկսած այդ ժամանակից՝ անձնական և մեղավոր պատասխանատվությունը ամրագրվեց քրեական օրենդրություններում, փոփոխվեց միջնադարյան օրենդրությունը, որն արդեն թույլատրում էր վաճառականների միությունների պատասխանատվությունը: Արդյունքում կազմակերպություններին քրեական պատասխանատվության ներգրավելը ճանաչվեց անթույլատրելի, քանի որ կազմակերպությունը չունի կամք, ուստի նրա նկատմամբ չի կարելի կիրառել այնպիսի հասկացություն, ինչպիսին մեղքն է, որը քրեական պատասխանատվության անօտարելի հատկանիշներից մեկն է:

Իրավագետները պնդում էին, որ կազմակերպությունը չի բավարարում օրենսդրությամբ ամրագրված պահանջները՝ «actus reus» (մեղավոր գործողություն) և «mens rea» (մեղավոր կամք, մեղք):

Չնայած դրան՝ կապիտալիզմի զարգացմանը և կազմակերպությունների քանակի ավելացմանը զուգընթաց պետությունները ընդունում էին կազմակերպությունների պատասխանատվության գաղափարը՝ ձգտելով այդ ճանապարհով իրենց ազդեցությունն ավելացնել տնտեսական գործընթացների վրա և սահմանել հակազդման միջոցներ այն հանցագործություններին, որոնք կարող էին կատարել մասնավոր հատվածի կոլեկտիվ սուբյեկտները: Այդ պատճառով շատ պետություններում, հատկապես ընդհանուր իրավունքի երկրներում, 19-րդ դարի կեսերին ներմուծվեց կազմակերպությունների քրեական պատասխանատվությունը:

Այսպես, Անգլիայում կազմակերպությունների քրեական պատասխանատվության կայացումը սկզբնական շրջանում անիրականանալի էր: Այն բխում էր օրենքի պահանջից, այն է՝ մեղադրյալն անձամբ պետք է ներկայանա դատարան: Կազմակերպությունների քրեական պատասխանատվության համակարգի հակառակորդ, անգլիացի օրենսդիր էդվարդ Տուրլուն նշել է, որ կազմակերպությունը մեղք չունի, քանի որ վերջինս չունի մարմին և հոգի, որին կարելի կլինի պատժել[1]:

Բայց և այնպես 19-րդ դարի կեսերին ընդհանուր իրավունքի երկրներում (Անգլիա, ԱՄՆ) առանձին դեպքերում դատարանները օրենքով սահմանված պարտավորությունները չկատարելու համար քրեական պատասխանատվության են ներգրավել կազմակերպություններին, իսկ հետագայում նաև այն կազմակերպություններին, որոնց ոչ պատշաճ, հակահիրավական գործունեությամբ վնաս էր պատճառվել հասարակությանը[2]: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ վնասը պետք է հասարարական վտանգավորության այնպիսի աստիճան ունենար, որ իրավունքի մյուս ճյուղերի սանկցիաների կիրառումը համաչափ չլինեին պատճառված վնասին:

Անգլիայում հետևյալ կանոնն էր սահմանվել. հանցագործության կատարման պարագայում մեղադրական դատավճռով պատասխանատվության կարող էր ենթարկվել հանցանքը անձամբ կատարած ծառայողը կամ գործակալը: Անգործությունը ֆիզիկական անձի մեղքի մեջ չէր կարող ներառվել, այլ կարող էր վերագրվել միայն կազմակերպությանը:

---

[1] Տե՛ս **Kasprzyk Adam.** Odpowiedzialno karna podmiotyw zbiorowych: Praca magisterska napisana na seminarium Prawa karnego / Adam Kasprzyk. - Lublin: Katollicki Universytet Lubelski, 2005., էջ 8:

[2] Տե՛ս **Грищук В.К.** Глобалізація і проблеми кримінальної відповідальності юридичних осіб / **В.К. Грищук, А.М. Цюра** // Вісник Львівського університету. Серія міжнародні відносини. - 2002. - Вип. 7., էջ 53:

Անգլիայում իրավաբանական անձանց՝ որպես քրեական պատասխանատվության սուբյեկտի, ճանաչումը տեղի ունեցավ 19-րդ դարի կեսերին[1] : 1846 թ.-ին «The Queen vs Great North of England Railway Co.» (Թագուհին ընդդեմ Հյուսիսային Անգլիայի մեծ երկաթգիծ ընկերության) գործով լորդ Դետլեմը կայացրեց որոշում, որով սահմանեց, որ ոչ իրավաչափ գործողությունների համար կազմակերպությունները կարող են ճանաչվել քրեական պատասխանատվության սուբյեկտներ[2]:

1944 թվականից սկսած՝ Անգլիայում հնարավոր է կազմակերպություններին քրեական պատասխանատվության ենթարկել ինչպես կատարման, այնպես էլ համակատարման համար: Շատ հաճախ կիրառվում է նաև «after ego» սկզբունքը: Այդ պատճառով իրավաբանական անձի կառավարչական համակարգի մեջ մտնող անձանց մեղավոր գործունեությունը համարվում է իրավաբանական անձի կողմից կատարված: Այն դեպքերում, երբ հանցաք կատարողը պաշտոնատար անձ է, կազմակերպությունը ենթակա է պատասխանատվության որպես հանցագործության կատարող: Եթե կազմակերպության ծառայողը համակատարողն է, ապա իրավաբանական անձը ենթակա է պատասխանատվության որպես համակատարող[3]:

Անգլիայի և ԱՄՆ-ի քրեական օրենսդրությունները այս սկզբունքից կատարում են բացառություն: Առաջին՝ հնարավոր չէ իրավաբանական անձին մեղավոր ճանաչել վերջինիս ծառայողի կատարած այնպիսի հանցագործության համար, որը բնույթով չի կարող կատարվել իրավաբանական անձի կողմից (սեռական հանցագործությունները և այլն): Երկրորդ՝ եթե խոսքը այնպիսի հանցագործությունների մասին է, որոնց կատարման դեպքում կարող է նշանակվել պատիժ ազատազրկման ձևով, «after ego» սկզբունքը չի գործում, քանի որ կազմակերպության նկատմամբ չի կարող կիրառվել նման պատժատեսակ:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ընդհանուր սկզբունքները նախատեսված են 1978թ.-ի «Մեկնաբանության մասին» օրենքում: Անգլիայում իրավաբանական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության կոռուպցիայի, փողերի լվացման և տնտեսական այլ հանցագործությունների համար: Վերոհիշյալ օրենքի համաձայն՝ ստատուտային հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթակա սուբյեկտը կազմակերպությունն է, եթե այլ հանցագործություն նախատեսված չէ օրենքով[4]:

Անգլիական ընդհանուր իրավունքի հիման վրա զարգացած ԱՄՆ-ի քրեական օրենսդրությամբ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը տևական ժամանակ քննարկվում էր պրակտիկ հարթակում: Այսպես, 1887թ.-ին ընդունվեց նահանգների միջև առևտրի մասին օրենքը, իսկ 1980 թվականին՝ Շերմանի հակատրեստային օրենքը, որոնք գործում են մինչ օրս: Այդ օրենքների ընդունմամբ ակնհայտ է դառնում օրենսդրի մտադրությունը՝ պայքար մղել տնտեսական ոլորտում կազմակերպությունների վտանգավոր, հակահիրավական գործու-

---

[1] Տե՛ս Уголовное право зарубежных государств. Общая часть / под. ред. И.Д. Козочкина. - М: Ин-т международного права и экономики имени А.С. Грибоедова, 2001., էջ 45:

[2] Տե՛ս **Волженкин Б.В.** Уголовная ответственность юридических лиц / Б.В. Волженкин // Санкт-Петербургский юрид. ин-т Генеральной прокуратуры РФ. - СПб., 1998. - 40 с. - (Серия «Современные стандарты в уголовном праве и уголовном процессе»), էջ 12:

[3] Տե՛ս **Пимонов В.А.** Теоретические и прикладные проблемы борьбы с общественно опасными посягательствами средствами уголовного права / В.А. Пимонов. - М.: Юрлитинформ, 2007, էջ 282.:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 281:

նության դեմ՝ կորպորատիվ սուբյեկտների նկատմամբ քրեաիրավական սանկցիաներ կիրառելու միջոցով[1]:

Տնտեսական զարգացմանը զուգընթաց՝ կազմատերպությունների քանակական աճի, հասարակական-տնտեսական կյանքում դրանց դերի ավելացման պատճառով անհրաժեշտություն առաջացավ վարելու կազմակերպությունների գործունեության վերահսկման առավել կոշտ քաղաքականություն: 20-րդ դարի սկզբներին ԱՄՆ-ի կոնգրեսը էլկինսի ակտում ձևակերպեց այն դրույթը, որի համաձայն՝ կազմակերպության աշխատակցի՝ իր իրավասության շրջանակներում կատարած գործողությունը կամ անգործությունը համարվում է կազմակերպության գործողություն կամ անգործություն: Այդ դրույթի սահմանադրականության հարցը 1909 թվականին ԱՄՆ-ի գերագույն դատարանը քննարկեց «Նյու Յորքի կենտրոնական և Հուդզոնի ջրային երկաթգիծ» ընկերությունը ընդդեմ Միացյալ Նահանգների գործով: Կենտրոնական Նյու Յորքի վերաբերյալ դատավճռի բողոքարկման ընթացքում էլկինսի՝ ակտի խախտման առթիվ դատապաշտպանը Սահմանադրության առաջին բաժնի, ինչպես նաև ծառայողների, գործակալների, աշխատակիցների գործողությունների համար կազմակերպության պատասխանատվության վերաբերյալ ակտի անհամապատասխանությունը փաստարկեց նրանով, որ աշխատակիցների գործունեության համար կազմակերպությանը նշանակված տուգանքը գանձվում է ընկերության բաժնետերերից, որոնք կատարված հակաիրավական արարքում որևէ մեղավորություն չունեն: Գերագույն դատարանը չհամաձայնվեց այդ մոտեցման հետ՝ ճանաչելով կազմակերպության քրեական պատասխանատվության հնարավորությունը[2] :

Կազմակերպությունների քրեական պատասխանատվության հնարավորություն նախատեսում են նաև այլ երկրների օրենսդրությունները: Այսպես, Իտալիայի և Ֆրանսիայի՝ 13-16-րդ դարերի դատական պրակտիկայում կարելի է հանդիպել դատարանի մեղադրական դատավճիռներ՝ կայացված քաղաքների, համայնքների, գիլդիաների և այլ կազմակերպությունների վերաբերյալ: Միջնադարյան Իտալիայի ստատուտները պատիժ էին սահմանում այն քաղաքների համար, որոնց տիրակալների նկատմամբ հանցագործություն էր կատարվել (օրինակ՝ 1362 թ. Հռոմեական ստատուտը)[3]: Կոլեկտիվի անդամի կատարած հանցագործության համար ամբողջ կոլեկտիվի պատասխնատվություն են նախատեսել միջնադարյան Անգլիայի, Սիցիլիայի թագավորության կանոնական իրավունքներով[4] :

Բացարձակ միապետության ժամանակաշրջանում Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ երկրների քաղաքները աստիճանաբար կորցնում էին իրենց ինքնուրույնությունը: Բաձարձակ միապետությունը ենթադրում էր, որ կորպորատիվ կազմակերպությունները քաղաքական կյանքից պետք է բացառվեն, իսկ երկրի հպատակները՝ անհատները, պետք է ենթարվեն պետության անմիջական իրավազորությանը: Այդ պատճառով կոլեկտիվ սուբյեկտների քրեական պատասխանատվության հնարավորությունը դառնում էր քիչ հավանական: Բացարձակ միապե-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 279:

[2] Տե՛ս **Волженкин Б.В.** Уголовная ответственность юридических лиц / Б.В. Волженкин // Санкт-Петербургский юрид. ин-т Генеральной прокуратуры РФ. - СПб., 1998. - 40 с. - (Серия «Современные стандарты в уголовном праве и уголовном процессе»), էջ 12:

[3] Տե՛ս **Patkaniowski M.** Wina i kara - elementy rzymskie i germanskie w prawie karnym statutyw miast wloskich / M. Pftkaniowski. - Krakow, 1939, էջ 33:

[4] Տե՛ս **Kasprzyk Adam.** Odpowiedzialno karna podmiotyw zbiorowych: Praca magisterska napisana na seminarium Prawa karnego / Adam Kasprzyk. - Lublin: Katollicki Universytet Lubelski, 2005, էջ 7:

տությանը բնորոշ էր իշխանության հետագա ամրապնդումը, որտեղ, բացի պետական մարմիններից, այլ կոլեկտիվ կազմակերպությունների համար տեղ չկար:

Լուսավորության գաղափարները իրենց հետ բերեցին արժեքային փոփոխություններ, ուստի զարկ տվեցին կոլեկտիվ սուբյեկտների քրեական պատասխանատվության հիմնահարցի նոր մոտեցումների զարգացմանը: Մայրցամաքային Եվրոպայի առաջին օրենսդրական ակտերի շարքում, որոնք անմիջականորեն սահմանեցին իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, հիշտակվում է 1670 թվականի ֆրանսիական օրդոնանսը: Դրանում առանձին բաժին էր նվիրված համայնքների պատժին՝ սահմանելով քաղաքների պատժի հատուկ տեսակներն ու կարգը[1]: Կորպորացիաների, ասոցացիաների և այլ կազմակերպությունների համար սահմանվում էին գույքային բնույթի պատիժներ՝ դրամական տուգանքներ, ետգնում, իսկ քաղաքների համար՝ որպես հատուկ կազմակերպությունների, նախատեսում էր հատուկ պատժատեսակներ, ինչպես օրինակ՝ ավերում, համապատասխան իրավունքներից, արտոնություններից զրկում, պատճառված վնասի փոխհատուցում[2]:

Ժամանակի ընթացքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը դադարեց կիրառվել, և պատասխանատվության սկսեցին կանչել միայն ֆիզիկական անձանց: Այդ հանգամանքի վրա իր վճռական ազդեցությունը ունեցավ ֆրանսիական 1789-1794 թթ.-ի հեղափոխությունը, որը կոլեկտիվ սուբյեկտներ քրեական պատասխանատվության գաղափարի վրա ունեցավ խորտակիչ ազդեցություն: 1810 թվականի քրեական օրենսդրությունն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն արդեն չէր նախատեսում[3]՝ չնայած Ֆրանսիայի 1810 թ.-ի քրեական օրենսդրությունը հեղինակային իրավունքի սեփականության նորմերի խախտման համար նախատեսում է պատասխանատվություն, մասնավորապես՝ տուգանքի նշանակում և շահույթի բռնագրավում:

Այնուամենայնիվ, Ֆրանսիայի այլ օրենքներով նախատեսվում էր իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն: Չնայած օրենսդիրը ձգտում է դեպի իրավական նորմաների ամբողջական կոդիֆիկացիայի, այնուամենայնիվ Ֆրանսիայում քրեական օրենսդրության նորմերը նախատեսված են ոչ միայն քրեական օրենսդրությամբ: «Պետությունից եկեղեցու տարանջատման մասին» 09.12.1905 թ.-ի օրենքի 36-րդ հոդվածում սահմանված է, որ եկեղեցականի կողմից այսպես կոչված «police de cultes» (աղանդավորական օրենսդրություն) իրավախախտման համար նշանակված տուգանքը չվճարելու դեպքում պատասխանատվության է ենթակա կրոնական կազմակերպությունը[4]: «Ծովային առևտրի մասին» 19.07.1934թ.-ի օրենքով համապարտ քրեական պատասխանատվություն է նախատեսված ինչպես նա-

---

[1] Տե՛ս **Крылова Н.Е.** Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты / Н. Е. Крылова // Вестник Московского университета. Серия 11. - 1998. - № 3 - М., 1998, էջ 70:

[2] Տե՛ս **Грищук В.К.** До питання про кримінальну відповідальність юридич¬них осіб / В.К. Грищук // Актуальні проблеми кримінального і кримінально-процесуального законодавства і практики його застосування: зб тез допов. учасників Регіонал. круглого столу (21-22 лютого 2003 р.). - Хмельницький: Хмельницький ін-т регіонального управління та права, 2003, էջ 3:

[3] Տե՛ս Уголовное право зарубежных государств. Общая часть / под. ред. И.Д. Козочкина. - М: Ин-т международного права и экономики имени А.С. Грибоедова, 2001, էջ 307:

[4] Տե՛ս **Filar M.** Odpowiedzialno karna podmiotyw zbiorowych (na tle ustawy o odpowiedzialno ci podmiotyw zbiorowych pod groba. kary z 28 pazdziernika 2002 r., w: Przest pczo gospodarcza z perspektywy Polski i Unii Europejskiej: materialy konferencyjne (Mikolajki, 26-28.09 2002 r.) / Red. Andrzej Adamski: TNOiK. - Toru, 2003, էջ 589:

վի հրամանատարի, այնպես էլ նավի սեփականատիրոջ համար, որը, ի դեպ, կարող էր լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ: Ներկայումս գործող «Աշխատանքի մասին» Ֆրանսիայի օրենսդրության 26-2 հոդվածով արտադրության ոլորտում աշխատակցի անզգուշությամբ կատարած հանցագործության համար դատարանի դատավճռով նշանակած տուգանքի և դատական ծախսերի համար պատասխանատու է ճանաչվում իրավաբանական անձը: Երեխաների առևտրի դեմ պայքարի մասին 1933 թ.-ի հունվարի 14-ի օրենքով քրեական պատասխանատվություն էր սահմանվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց համար:

Կարևոր նշանակություն ուներ 1945 թ.-ի մայիսի 5-ի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զավթիչների հետ համագործակցող լրատվության միջոցների քրեական հետապնդման մասին օրդոնանսը: Իրավաբանական անձանց, սեփականատերերի՝ ֆիզիկական անձանց հետ քրեական պատասխանատվության էին ենթակա ընկերությունները, ասոցացիաները, սինդիկատները՝ որպես հանցագործության կատարողներ կամ համակատարողներ: Այդ ժամանակ հեռահաղորդակցության ոլորտում որպես կազմակերպության ղեկավարներ շատ հազվադեպ էին հանդես գալիս ֆիզիկական անձինք: Օրդոնանսը մեծ մասամբ նախատեսված էր իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելու համար:

Այդ օրդոնանսում առաջին անգամ սահմանվեցին իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմքերը.

ա) իրավաբանական անձի անունից կատարված արարքներ, բ) իրավաբանական անձի օգտին կատարված արարքներ, գ) իրավաբանական անձի մարմինների կամ ղեկավարների կողմից կատարված արարքներ:

Նախատեսվում էին պատիժների այնպիսի տեսակներ, որոնք կիրառվում էին իրավաբանական անձանց նկատմամբ՝ գործունեության դադարեցում՝ առանց դրանց վերականգնման իրավունքի, սեփականության լրիվ կամ մասնակի բռնագրավում, դատարանի դատավճռի հրապարակում[1]:

Ֆրանսիական օրենսդրության այդ նորմերը որոշակի առումով միմյանց հակադրվում էին: Երբեմն քրեական պատասխանատվության էին ենթարկվում իրավաբանական անձանց կարգավիճակ չունեցող կազմակերպությունները: Հաճախ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվում էին բանտային պատժամիջոցներ, չնայած խոսքը վերաբերում էր կազմակերպությանը[2]:

Ֆրանսիայի քրեական օրենսդրության նախագիծը, որը 1934 թ.-ին մշակված էր հատուկ հանձնաժողովի կողմից, նշանակալի տեղ էր տրամադրում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը: Այդ նախագծի համաձայն՝ կազմակերպությունը քրեական պատասխանատվության էր ենթարկվում իրավաբանական անձի մարմինների կողմից՝ նրանց անունից կատարված հանցագործության կամ զանցանքի համար: Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ կապված իրադարձությունները, սակայն, ստիպեցին ֆրանսիական օրենսդրին դադարեցնել օրենսդրական աշխատանքները, այդ պատճառով էլ տվյալ նախագիծը նույնիսկ չքննարկվեց օրենսդիր մարմնում:

---

[1] Տե՛ս **Крылова Н.Е.** Основные черты нового уголовного кодекса Франции / Н.Е Крылова. - М.: Спарк, 1996, էջ 50-51:

[2] Տե՛ս **Крылова Н.Е.** Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты / НЕ. Крылова // Вестник Московского университета. Серия 11. - 1998. - № 3 - М., 1998, էջ 71:

20-րդ դարի երկրորդ կեսին ֆրանսիական իրավաբանները կրկին անդրադարձան իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու գաղափարին: Այն ենթարկվեց մի շարք քննադատությունների, որոնք բացառում էին իրավաբանական անձանց՝ որպես առանձին, ինքնուրույն սուբյեկտների, քրեական պատասխանատվության ենթարկելը: Դրանք չխանգարեցին, որ Ֆրանսիայի 1992 թվականի քրեական օրենսդրությունը (օրինական ուժ մեջ է մտել 1994 թվականին) քրեական պատասխանատվություն նախատեսի իրավաբանական անձի համար՝ բացառությամբ պետության:

Մի փոքր այլ կերպ էր այս հարցի կարգավորումը Գերմանիայի օրենսդրությամբ, որի քրեական օրենսդրությունը կառուցվել է Գերմանական կայսրության 1871 թվականի քրեական օրենքի հիման վրա: Այն հիմնվում էր քրեական իրավունքի դասական դպրոցի գաղափարների վրա՝ վերջինիս մեղքի հոգեբանական տեսությամբ, որը բացառում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հնարավորությունը: Մեղքի առկայության հանգամանքը կարևորվում է ոչ միայն քրեական, այլև վարչական և քաղաքացիական օրենսդրություններում:

Տևական քննարկման արդյունքում Գերմանիայում ներդրվեց իրավաբանական անձանց կվազիքրեական (վարչական-քրեական) պատասխանատվություն, որը նախատեսված է քրեական օրենսդրության 14-րդ գլխում:

Քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից բացի՝ Լեհաստանի օրենսդրությամբ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու առաջին փորձերից մեկը «Կարտելների մասին» 1939 թ. հուլիսի 13-ի օրենքն է, որը նախատեսում էր կոլեկտիվ սուբյեկտների քրեական պատասխանատվության հնարավորությունը: «Անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի մասին» 1993 թ. ապրիլի 16-ի օրենքը ակտիվ կաշառակերության համար նախատեսում էր իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն[1]: 2002 թվականի հոկտեմբերի 28-ի «Պատժի սպառնալիքով արգելված գործողությունների համար կոլեկտիվ սուբյեկտների պատասխանատվության մասին» օրենքի ընդունմամբ Լեհաստանի օրենսդրության մեջ ներդրվեց իրավաբանական անձանց և այդպիսի կարգավիճակ չունեցող կոլեկտիվ սուբյեկտների քրեական պատասխանատվությունը:

Բացի վերոհիշյալ երկրներից՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը նախատեսված է շատ այլ երկրների օրենսդրություններով: Օրինակ, Ճապոնիայում 1947 թվականին ընդունվեց հակամենաշնորհային օրենքը, որը նախատեսում էր կազմակերպությունների քրեական պատասխանատվություն: Հոլանդիայում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն սահմանվեց 1976 թվականին, Պորտուգալիայում՝ 1982 թվականին, Ֆինլանդիայում՝ 1995 թվականին, իսկ 1988 թվականին իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն սահմանվեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, որը, ի դեպ, առաջինն էր սոցիալիստական հանրապետություններում: Խոսքը վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարի մասին որոշմանը, որը տնտեսական հանցագործությունների համար սահմանում էր քրեական պատասխանատվություն:

Արտասահմանյան երկրներում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համակարգը ձևավորվել է տևական ժամանակամիջոցում, որը

[1] Տե՛ս **Namyslowska-Gabrysiak Barbara.** Odpowiedzialno karna osyb prawnych / Barbara Namyslowska-Gabrysiak. - Warszawa: Wydawnictwo C.H. Beck, 2003, էջ 145:

թույլ է տվել որոշել այդպիսի պատասխանատվության հիմքերը և մշակել պատիժների հատուկ համակարգ:

Այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծով նախատեսվում է իրավաբական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը: Մասնավորապես, նախագծի 20-րդ հոդվածում մեղսունակ ֆիզիկական անձի հետ մեկտեղ քրեական պատասխանատվության սուբյեկտ է դիտվում նաև իրավաբանական անձը:

Իրավաբանական անձանց քրեական պատախանատվության ընդհանուր պայմանները և պատժի նշանակման համակարգը կարգավորվում են նախագծի առանձին բաժնում:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքը իրավաբանական անձանց քրեական պատախանատվության միակ հիմք համարում է հանցանքը, եթե այն. ա) կատարվել է այն ֆիզիկական անձի արարքով, որը օրենքի, այլ իրավական ակտի, պայմանագրի, կանոնադրության, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա լիազորված է նշված կազմակերպության անունից այդպիսի արարք կատարելու, բ) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի ծառայողի կողմից՝ կապված իր ծառայողական գործունեության հետ, եթե հանցանքի կատարումը հնարավոր է դարձել տվյալ կազմակերպությունում ներքին վերահսկողության, իր աշխատակիցների կողմից հանցանքների կատարումը կանխարգելելու մեխանիզմների անկատարության հետևանքով, գ) հանցանքը կատարվել է ի շահ իրավաբանական անձի՝ այն անձի կողմից, որը մասնակցություն ունի նշված կազմակերպության կառավարման կամ վերահսկող մարմիններում, դ) հանցանքը կատարվել է ի շահ իրավաբանական անձի ՝ այն անձի կողմից, որը օրենքի կամ այլ իրավական ակտի, պայմանագրի ուժով, հատուկ լիազորության կամ իրավաբանական անձի կողմից կայացրած որոշման հիման վրա կամ տվյալ կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով իրավունք ունի նշված կազմակերպության համար պարտադիր ցուցումներ տալու կամ այլ ձևով ազդելու կազմակերպության գործունեության կամ դրա որոշումների վրա կամ ե) հանցանքը ա), բ), գ), դ) կետերով նախատեսված անձի գիտությամբ կամ դրդմամբ՝ ի շահ նշված կազմակերպության կատարվել է այլ անձի կողմից: Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե դրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի հոդված 137-ի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության են ենթակա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը, միջազգային կազմակերպությունը, օտարերկրյա իրավունքին համապատասխան ստեղծված իրավաբանական անձը կամ դրանց առանձնացված ստորաբաժանումները, որոնց միջոցով այդ կազմակերպությունները իրենց գործունեությունն են իրականացնում ՀՀ տարածքում:

Քրեական պատասխանատվության անձեռնմխելիությամբ օժտված միջազգային կազմակերպությունը ՀՀ-ում ենթակա է քրեական պատասխանատվության, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով զրկվում է նշված անձեռնմխելիությունից:

ՀՀ տարածքում ստեղծված իրավաբանական անձը քրեական օրենսգրքով պաշտպանվող շահերի դեմ ՀՀ տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետության դատարանի դատական ակտ չկա:

Միջազգային կազմակերպությունը, օտարերկրյա իրավունքին համապատասխան ստեղծված իրավաբանական անձը կամ դրանց առանձնացված ստորաբաժանումը ՀՀ տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե հանցագործությունը ուղղված է եղել Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կամ ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձի կամ այլ կազմերպության շահերի դեմ և եթե չի դատապարտվել օտարերկրյա պետության դատարանի կողմից:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում սահմանվում է նաև իրավաբանական անձանց հանցակցությանը վերաբերող դրույթներ. մասնավորապես նախագծի 140-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ իրավաբանական անձը կարող է մասնակցել այլ իրավաբանական անձի կողմից հանցանքի կատարմանը որպես կատարող, կազմակերպիչ կամ օժանդակող: Նախագծով իրավաբանական անձը կարող է հանցակցել միայն իրավաբանական անձի հետ, այս դրույթը կրում է իմպերատիվ բնույթ, քանի որ նույն հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ իրավաբանական անձի և ֆիզիկական անձի համատեղ մասնակցությունը հանցագործությանը հանցակցություն չի առաջացնում:

Նախագիծը առանձին գլխով կարգավորում է նաև իրավաբանական անձի դատվածությանը և նրա նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը՝ սահմանելով, որ իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժները՝ 1) տուգանք, 2) գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում, 3) լուծարում, որն, ի դեպ, չի կարող կիրառվել իրավաբանական անձի նկատմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար, 4) ՀՀ տարածքում գործունեություն իրականացնելու արգելք[1] :

Այնուամենայնիվ, նույնիսկ մշակման և զարգացման երկարատև ընթացակարգ անցնելու պայմաններում արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունները իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանն առնչվող բոլոր հարցերի պատասխանները չեն տալիս: Այդ պատճառով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնահարցի վերաբերյալ առկա փորձի ուսումնասիրությունը կնպաստի ինչպես այդ հիմնահարցի վերաբերյալ նոր մոտեցումների ձևավորմանը, այնպես էլ կնպաստի պատասխանատվության այդպիսի տեսակը հայրենական քրեական օրենսդրություն ներմուծելու անհրաժեշտության խնդրի հետ կապված քննարկումներին:

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը, ապա կարծում ենք, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի մշակումը առաջընթաց քայլ է քննարկվող ինստիտուտը ՀՀ օրենսդրություն ներմուծելու առումով, քանզի իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրումը խոչընդոտող որևէ հիմնարար սկզբունք ՀՀ օրենսդրությունը չի պարունակում: Իրավաբանական անձանց հարկավոր է ճանաչել հանցագործության սուբյեկտ՝ առաջնորդվելով ֆրանսիական մոդելով, որտեղ սպառիչ կերպով նախատեսվում է այն հան-

[1] ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծ:

ցավոր արարքների շրջանակը, որոնց համար իրավաբանական անձինք ենթարկվում են պատասխանատվության, բացի դրանից՝ անհրաժեշտ է սահմանել միջազգային պրակտիկայում իրենց արդարացրած պատժատեսակներ. սա է հանցավորության դեմ պայքարի արդյունավետ ուղին, ճշմարիտ միջոցը՝ կանխելու և հատուցելու հասարակությանը հասցված, հասցվող և հասցվելիք ահռելի վնասները: Նման ինստիտուտի ներդրումը առավել կնպաստի Հայաստանում հանցավորության դեմ պայքարին:

ОСОБЕННОСТИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ И ИХ ПЕРСПЕКТИВЫ ДЛЯ ВНЕДРЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Эдгар Карапетян
Следственный комитет Республики Армения, старший следователь СО административных районов Кентрон и Норк-Мараш СУ города Еревана, старший лейтенант юстиции

В статье описывается создание и развитие основных положений уголовной ответственности юридических лиц, совершающих общественно опасные деяния, которые регулируются законодательствами зарубежных стран, а также перспективы урегулирования уголовного права Республики Армения.

FEATURES OF CRIMINAL LIBILITY OF LEGAL PERSONS IN FOREIN COUNTRIES AND THEIR PROSPECTS FOR IMPLEMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Edgar Karapetyan
Investigative committee of the RA, senior investigator of the ID of Kentron and Nork-Marash administrative districts of the ID of Yerevan city, justice senior lieutenant

In this article is shown creating and development of the main positions of criminal liability of entities, who are making socially dangerous acts, which are regulated by law of foreign countries, and also is shown the prospect for the settlement of the criminal law of the Republic of Armenia

Բանալի բառեր – *քրեական օրենսդրություն, հանցագործության սուբյեկտ, իրավաբանական անձ, քրեական պատասխանատվություն, քրեական պատիժ*
Ключевые слова – *криминальное законодательство, субьект преступления, юридическое лицо, криминальная ответственность, криминальное наказание*
Key words – *criminal law, criminal entity, legal person, criminal liability, criminal punishment*